ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2024 թ.

«ՔԱՂԱՔԱՑՈՒ ՁԱՅՆԸ» ՄԵԴԻԱ
ՀԱՐԹԱԿԻ ԼՐԱԳՐՈՂ ՆԱՏԱԼՅԱ ՕՍՅԱՆԻՆ
Հասցե՝ cvmedia.am@gmail.com

Հարգելի տիկին Օսյան

Ի պատասխան Ձեր 15.10.2024թ. հարցմանը

Գետերի վարարումների և սելավների վտանգներից Լոռու մարզի բնակավայրերը, ինֆրակառույցները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով Լոռու մարզի համայնքների ղեկավարներին ուղղվել է համապատասխան բովանդակությամբ գրություն:

Բազմամյա տարիների դիտարկումները ցույց են տալիս, որ Դեբետ գետի ուժեղ վարարումները տեղի են ունենում ապրիլ ամսից մինչև հունիսի կեսերը ընկած ժամանակահատվածում: Ներկայումս ընթացքի մեջ է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակված՝ «Դեբեդ գետի մաքրման և վերականգնման գործընթացին ուղղված աշխատանքների իրականացման նպատակով միջգերատեսչական համակարգող և փորձագիտական աշխատանքային խումբ ստեղծելու, դրա անհատական կազմը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» վարչապետի որոշման նախագծի փաթեթը: Կազմավորված աշխատանքային խմբերը վեր կհանեն բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են Դեբետ գետի վտանգները մեղմելու համար:

X

Հարգանքով՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Արտակ Դեմիրչյան
Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության
վարչություն, հեռ.՝ (0322 4 30 99)